ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

11 մարտի շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

35
(2701)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԹԻՄԱԿԻՑՆԵՐԸ ԽԱԲԵԼ ԵՆ. ՄԱՍ 14

Վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Տարոն Չախոյանը մարտի 9-ին Հանրային հեռուստաընկերության եթերում հանդես է եկել այնպիսի հայտարարություններով, որոնք իրականությանը կրկին չեն համապատասխանում: Նա, մասնավորապես, հայտարարել է, թե 2018-2020 թվականներին Հայաստանը ձեռք է բերել այնքան սպառազինություն, որքան տասը տարում՝ 2008-2018 թվականներին: Նման մանիպուլյատիվ հայտարարություն 2022 թվականի ապրիլի 27-ին արել էր նաեւ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը: Փաստերն իրականում այլ բան են ասում: Ըստ SIPRI-ի՝ Ստոկհոլմի խաղաղության հետազոտության միջազգային ինստիտուտի տվյալների՝ Հայաստանը սպառազինության ձեռք բերման ծավալները մեծացրել է՝ հատկապես սկսած 2016-ից՝ եւ Սերժ Սարգսյանի, եւ Նիկոլ Փաշինյանի տարիներին: Եթե միայն քանակի մասով համեմատենք, ապա, Civilnetcheck-ի տվյալների համաձայն, Սարգսյանի տարիներին ավելի շատ զենք է ձեռք բերվել: Հստակ նշել, թե որ կառավարչի օրոք ընդհանուր որքան կամ ինչ գումարի զենք է ձեռք բերվել, հնարավոր չէ, քանի որ Հայաստանին մատակարարված սպառազինության գները հիմնականում անհայտ են: SIPRI-ի բազայում առկա են 2019-ին Ռուսաստանից գնված չորս «Սու-30» կործանիչների գինը՝ 120 մլն դոլար, եւ 2020-ին Հնդկաստանից գնված չորս Swathi ռադիոլոկացիոն կայանների գինը՝ 40 մլն դոլար: Այսինքն՝ հստակ նշել, թե որ կառավարչի օրոք որքան գումարի զենք է ձեռք բերվել, հնարավոր չէ: Հայաստանը սպառազինության ամենամեծ ծավալները ձեռք է բերել առաջին արցախյան պատերազմի տարիներին եւ դրանից անմիջապես հետո՝ 1993-96 թթ. եւ 2016-ից սկսած՝ Սերժ Սարգսյանի եւ Նիկոլ Փաշինյանի կառավարման տարիներին: Այսպիսով, Հանրային հեռուստաընկերության եթերում Տարոն Չախոյանի արած հայտարարությունը, թե 2018-2020 գնվել է նույնքան զենք, որքան Սերժ Սարգսյանի կառավարման տասը տարիներին, մանիպուլյատիվ է եւ չհիմնավորված:

«Ժողովուրդ» օրաթերթի հավաստի տեղեկություններով՝ «Ապրելու երկիր» կուսակցությունն ավագանու ընտրություններին ընդառաջ «փնտրտուքների» մեջ է. կուսակցությունը փնտրում է մարդկանց, որոնք կհամալրեն ավագանու ցուցակը: Մեր աղբյուրները հայտնեցին, որ կուսակցության հիմնադիրներ Մանե Թանդիլյանն ու Մեսրոպ Առաքելյանը այս օրերին տարբեր մարդկանց հետ են հանդիպում, նրանց առաջարկում են ավագանու անդամ լինել իրենց կուսակցությունով, սակայն կտրուկ մերժում են ստանում: Բանն այն է, որ փորձում են ցուցակը համալրել հայտնի դեմքերով, սակայն ում առաջարկում են համալրել իրենց ցուցակը, գրեթե բոլորը հրաժարվում են: Այս առիթով «Ժողովուրդ» օրաթերթը մեկնաբանություն խնդրեց կուսակցության մամուլի խոսնակ Հռիփսիմե Հովհաննիսյանից: Վերջինս նախ ասաց, որ հարցերը գրավոր ուղարկենք, սակայն դրանց ծանոթանալուց հետո հրաժարվեց մեկնաբանել: Մեր բազմաթիվ զանգեր մնացին անպատասխան, ինչը եւս մեկ անգամ հիմնավորում է մեր տեղեկությունները: Ըստ էության, եթե մեր տեղեկությունները հիմնավոր չլինեին, կուսակցության խոսնակը կշտապեր հերքել այն, այլ ոչ թե կխուսափեր հարցերից:



ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարութունն առաջարկում է փոփոխություններ կատարել «Տեսալսողական մեդիայի մասին» վերջերս հաճախ քննարկված ՀՀ օրենքում: Մասնավորապես, փոփոխությամբ հնարավոր կլինի վերահսկել տեսալսողական հաղորդումների տեխնիկական չափանիշների համապատասխանությունը ստանդարտացման ազգային մարմնի կողմից ընդունված եւ գործողության մեջ դրված ստանդարտներին: Մյուս կողմից՝ ավելացվել է նոր պահանջ հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթին մասնակցելու հայտի ներկայացմանը, մասնավորապես՝ առաջարկվում է հայտին կցել նաեւ տեղեկանք՝ հեռարձակման ծառայությունների մասով ժամկետանց պարտքեր եւ պարտավորություններ չունենալու մասին: Նկատենք՝ գաղտնիք չէ, որ հեռուստաընկերությունները եւ հատկապես մասնավոր հեռուստաընկերությունները ունենում են պարտքեր, եւ այս կարգավորումը կարծես թե եւս մեկ միջոց է ոչ ցանկալի լրատվամիջոցներին եթեր չթողնելու կամ եթերազրկելու համար. մի երեւույթ, որ ողջ կյանքը Նիկոլ Փաշինյանը քննադատում էր:

Գլխավոր դատախազությունն Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Խաչատուր Սուքիասյանին պատկանող «Սիլ Պլազա»-ի գործով կռվի մեջ է մտել գործը քննող դատավորի հետ: Ինչպես հայտնի է, Վարչական դատարանի դատավոր Անի Հարությունյանն ինքնաբացարկ էր հայտնել «Սիլ պլազա» ՍՊԸ-ի գործով: Բանն այն է, որ Խաչատուր Սուքիասյանին պատկանող ընկերության ներկայացուցիչը բացարկի միջնորդություն էր ներկայացրել՝ նշելով, որ դատավոր Անի Հարությունյանը չի կարող քննել այս գործը, քանի որ դատախազությունը ամիսներ առաջ քրեական հետապնդում էր հարուցել դատավոր Անի Հարությունյանի նկատմամբ: Թեեւ այդ հետապնդումը կապ չուներ դատավորի գործունեության հետ, սակայն «Սիլ Պլազայի» ներկայացուցիչը հայտնել էր, որ այս գործով կայացվելիք դատական ակտը կարող է օբյեկտիվ չլինել: Այս ամենից հետո Անի Հարությունյանը ինքնաբացարկ հայտնեց, սակայն Գլխավոր դատախազությունը չի հաշտվել դատավորի այս որոշման հետ եւ այն բողոքարկել է ՀՀ վերաքննիչ վարչական դատարան:

ԱՐՏԱՔԻՆ ԽԱՂԱՑՈՂՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆՆ ՈՒ ԱԴՐԲԵՋԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՆ ԵԿԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթը Հայաստանի եւ Արցախի շուրջ տեղի ունեցող զարգացումների վերաբերյալ զրուցել է քաղաքագետ Վիգեն Հակոբյանի հետ:

-Պարոն Հակոբյան, Հայաստանը եւ Ադրբեջանը շարունակում են բանակցել խաղաղության պայմանագրի շուրջ, սակայն կողմերին այդպես էլ չի հաջողվում դրա կետերի շուրջ համաձայնության գալ: Ըստ Ձեզ՝ ինչ փուլում են հայ-ադրբեջանական բանակցություններն այս պահին:

-Ինձ մոտ տպավորություն է, որ Հայաստանը եւ Ադրբեջանն արդեն դուրս են եկել ինչ-որ մի փաստաթղթի վրա. գուցե, դա դեռեւս շրջանակային է: Կարծում եմ՝ սրանով է նաեւ պայմանավորված, որ կողմերն այլեւս իրար հետ չեն էլ հանդիպում, այլ օնլայն ռեժիմով են քննարկումներն անում: Սովորաբար օնլայն ռեժիմով քաղաքականության մեջ քննարկում են այն փաստաթղթերը կամ այն տարբերակները, որոնց շուրջ արդեն համաձայնություն կա, եւ խնդիրը ավելի շատ դետալների մեջ է: Խոսքը ոչ թե կոնտենտային դետալների մեջ է, այլ տեխնիկական խնդիրների՝ ստորակետեր կամ խմբագրական հարցեր: Ինձ մոտ տպավորություն է, որ կողմերը դուրս են եկել ինչ-որ տարբերակի վրա, հիմա նաեւ արեւմտյան միջնորդները շտապեցնում են նրանց՝ անընդհատ դրդելով, որպեսզի հանդիպումներ լինեն:

Կարծում եմ՝ այս աժիոտաժը, այդ թվում՝ Ադրբեջանի կիրառած գործիքակազմը՝ կրակոցները, ճնշումները եւ սպառնալիքները, հենց դրանով են պայմանավորված, որ Ադրբեջանը շտապում է եւ փորձում է հնարավորինս արագ դուրս գալ ստորագրման վրա: Կարծում եմ՝ սրանով է պայմանավորված նաեւ, որ չկա որոշակիություն միջազգային հարաբերություններում, մասնավորապես՝ Ռուսաստան-Արեւմուտք հակամարտության շուրջ. քանի դեռ այդ անորոշությունը կա, փորձում են պղտոր ջրում ձուկ որսալ եւ որքան հնարավոր է շուտ որսալ խաղաղության պայմանագիրը:

-Պարոն Հակոբյան, Ձեր խոսքում նշեցիք, որ, Ձեր տպավորությամբ, Հայաստանն ու Ադրբեջանը արդեն համաձայնության են եկել ինչ-որ փաստաթղթի շուրջ:

-Խնդիրը հենց նրանում է, որ որոշակի պայմանավորվածություններ եղել են. դա ոչ միայն իմ տպավորությունն է. եթե հիշում եք, Մյունխենում Ալիեւը դրա մասին խոսեց, որ առաջխաղացում կա բանակցություններում, բայց ոչ ամբողջովին, այսինքն՝ կան որոշակի կետեր, որը Ադրբեջանին բավարարում է: Ալիեւը նաեւ տեսնում է, որ Հայաստանի իշխանությունները բավականին զիջողական են տրամադրված, հասկանում է, որ ճնշումներն աշխատում են: Այն, որ ինչ-որ փաստաթղթի վրա դուրս են գալիս, որոշ ժամանակ առաջ ասաց նաեւ Ախ քարտուղար Արմեն Գրիգորյանը: Կարծում եմ, որ միջնորդները, որոնք շտապեցնում են կողմերին, նաեւ տեսնում են, որ որքան էլ Հայաստանը զիջում է, փորձում է ընդառաջել Ադրբեջանի պահանջներին, Ադրբեջանի ախորժակն ավելի է բացվում, ուզում է ավելին ստանալ. միջնորդները հասկանում են, որ այսպես խնդիրը հնարավոր չի լինի լուծել:

Ես կարծում եմ նաեւ, որ փաստաթղթի ստորագրումը կախված է ոչ այնքան Հայաստանի ու Ադրբեջանի ցանկություններով, որքան երրորդ կողմի ցանկությամբ. այստեղ շահագրգիռ շատ խաղացողներ կան, որոնց մի մասին բանակցային ընթացքը չի բավարարում, չի բավարարում նաեւ միջնորդների թվի ավելացումը; Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է Ռուսաստանին եւ Իրանին, որոնք ասում են՝ արեւմտյան կողմի ներգրավվածությունն իրենց չի բավարարում: Իրանը միշտ ասել է, որ իր համար անընդունելի է արտառեգիոնալ խաղացողների ներգրավվածությունը, իսկ ռուսները բացահայտ ասում են, որ Արեւմուտքի նպատակը իրենց տարածաշրջանից դուրս մղելն է: Այս իրավիճակում արտաքին խաղացողների մի մասը կարող է իր դերն ունենալ եւ թույլ չտալ, որպեսզի Ադրբեջանը եւ Հայաստանը ինչ-որ լուծման գան:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ՝ ՈՉ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթը, օգտվելով բաց աղբյուրներում հրապարակված տեղեկատվությունից, հավաքագրել է, թե 2018-ի իշխանափոխությունից մինչեւ այս պահը՝ Փաշինյանի կառավարման ժամանակահատվածում, չհաշված պատերազմական գործողությունները, բանակում մահվան քանի դեպք է գրանցվել: Այսպես, ըստ razm.info կայքում հրապարակված տեղեկատվության՝ 2018-ին ու 2019-ին ՀՀ ԶՈՒ-ում զոհերի թիվը համապատասխանաբար 63 եւ 49 է եղել: Նշենք, սակայն, որ Փաշինյանը 2018-ի մայիսից է ստանձնել ՀՀ կառավարումը:

2020-ին, բացի պատերազմի հազարավոր զոհերը, ըստ Հելսինկյան քաղաքացիական անսամբլեայի Վանաձորի գրասենյակի ներկայացրած տվյալների՝ պատերազմական գործողություններով չպայմանավորված՝ 100 զինծառայողի մահվան դեպք է գրանցվել: 2021-ին խաղաղ պայմաններում 65 զինծառայող է զոհվել. տեղեկությունը իրավապաշտպան Զառա Հովհաննիսյանն է ներկայացրել մի հարցազրույցի ժամանակ: Նախորդ՝ 2022թ.-ի հունվար-սեպտեմբեր ամիսներին, բացի սեպտեմբերի 13-14-ի ռազմական էսկալացիայի հետեւանքով ունեցած մոտ երեք հարյուր զոհերը, խաղաղ պայմաններում, ըստ կայքերից մեկի ներկայացրած տեղեկատվության, բանակում մահվան 51 դեպք է գրանցվել (3 ամսվա տվյալները բացակայում են): Ամենասարսափելին, ցավոք, 2023-ի հենց սկզբին գրանցված դեպքն էր՝ Գեղարքունիքի մարզի ողբերգությունը, ինչի ժամանակ ժամկետային 15 զինծառայող հրդեհի զոհ դարձավ:

Այս տարվա երրորդ ամիսն է արդեն, եւ Զինված ուժերում արդեն 20 զինծառայող է մահացել ոչ հակառակորդի կրակոցից: Այսպես, ի մի բերելով վերոգրյալ թվերը՝ մոտավոր այսպիսի պատկեր է ստացվում. Նիկոլ Փաշինյանի կառավարումից ի վեր՝ առ այս պահը, խաղաղ պայմաններում (չհաշված 2020-ի 44-օրյա ու 2022-ի սեպտեմբերյան երկօրյա պատերազմները) 348 զինծառայող է զոհվել:

Եթե այս թիվը համեմատելու լինենք մինչեւ Նիկոլ Փաշինյանի կառավարումը եղած նախորդ 4 տարիների հետ (այդ ժամանակ ՀՀ նախագահը Սերժ Սարգսյանն էր), ապա նորից, ըստ razշ.info.aշ-ի ներկայացրած տվյալների, ապրիլյան քառօրյա պատերազմի զոհերը չհաշված, Սարգսյանի կառավարման վերջին 4 տարիներին բանակում մահացության 256 դեպք է գրանցվել, Փաշինյանի օրոք՝ 348:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՄԿԱՆՈՒՄ Է ԳԼԽԻ ԳԱԼԻՔԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ օղակը ՀՀ առողջապահության նախկին նախարար, այժմ ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Արսեն Թորոսյանի շուրջ սեղմվում է: Չի բացառվում, որ Թորոսյանն առաջիկայում ձերբակալվի: Երեկ նախաքննական մարմինը՝ Հակակոռուպցիոն կոմիտեն, ձերբակալեց Երեւանի փոխքաղաքապետ Գեւորգ Սիմոնյանին, քանի որ Սիմոնյանը առողջապահության նախարար Արսեն Թորոսյանի օրոք նրա տեղակալն էր: Տեղեկացանք նաեւ, որ այս գործով հարցաքննությունները ինտենսիվ շարունակվում են: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ հարցաքննվել է ՊԵԿ փոխնախագահ Արտյոմ Սմբատյանը, որը Թորոսյանի՝ նախարար եղած ժամանակ դարձյալ փոխնախարար է եղել եւ Քովիդի գծով համակարգողը: Ըստ մեզ հասած տեղեկությունների՝ առայժմ իրավապահները Սմբատյանին միայն հարցաքննել են, իսկ թե ինչ կլինի, ցույց կտա ժամանակը: Շղթան այսքանով չի ավարտվում: Հարցաքննվել են նաեւ 5 հիվանդանոցի տնօրեններ, որոնք Քովիդով հիվանդների են սպասարկել: Հարցաքննվել են նաեւ առողջապահության արդեն նախկին նախարար Թորոսյանի աշխատակազմի երեք ղեկավարները, որոնցից Լուսինե Քոչարյանը եւ Ծաղիկ Վարդանյանն անգամ առերեսվել են: Այսպիսով, նախկին նախարար Արսեն Թորոսյանի գլխին սեւ ամպեր են կուտակվում, քանի որ, մեզ հասած բացառիկ տեղեկությունների համաձայն, նրա դեմ ցուցմունք տվողներ կան, ինչը ենթադրել է տալիս, որ Թորոսյանը եւս առաջիկայում գուցե ձերբակալվի: Հիշեցնենք, որ Թորոսյանն այն նախարարն էր, որ նշանակվելուց հետո շատ անվանի բժիշկների ու առողջապահության կազմակերպիչների մասով «լայվ» էր մտնում ու հրապարակային բոլորին թալանի, կոռուպցիայի համար մեղադրում: Հիմա բացահայտվել է, որ ինքն է ղեկավարել ու կազմակերպել թալանը: Ավելին՝ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իրավապահները Թորոսյանի գործունեության շուրջ միայն Քովիդի գործընթացով չէ, որ բացահայտումներ են արել:

Այլ նորություններ էլ կան, որոնց մասին կներկայացնենք առաջիկայում:

Հիշեցնենք, որ դեռեւս անցած տարի՝ նոյեմբերի 22-ին, «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ իրավապահ համակարգում ներքին քննարկում է եղել, որ ԱԺ ՔՊ-ական պատգամավոր, առողջապահության նախկին նախարար Արսեն Թորոսյանին Հակակոռուպցիոն կոմիտեն պետք է հրավիրի հարցաքննության:

Ասել է թե՝ նախաքննական մարմինը պատրաստվել է ծանուցում ուղարկել Արսեն Թորոսյանին, սակայն իրավապահ համակարգում գնահատական է հնչել, որ նրան մեղադրանք առաջադրելու պահը դեռեւս չի հասունացել: Արդեն իսկ քրեական գործով ուշագրավ հանգամանքներ են ի հայտ եկել: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ այս օրերին Հակակոռուպցիոն կոմիտեն ակտիվ կերպով հարցաքննության է հրավիրում «Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի աշխատակիցներին: Իսկ ի՞նչ քրեական վարույթի մասին է խոսքը: Ըստ քրեական վարույթով ձեռք բերված տվյալների՝ «ՀՀ-ում նոր կորոնավիրուսային վարակի (Covid-19) կանխարգելման, վերահսկման, բուժման այլ համալիր միջոցառումների» իրականացման ծրագրով ՀՀ կառավարությունը հատկացրել է ավելի քան 26 մլրդ ՀՀ դրամ, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից:

ԹՈՎՄԱՍՅԱՆԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ՈՒՆԵՑԵԼ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Խորհրդարանում հյուրընկալել եմ ՀՀ-ում ՄԱԿ-ի մշտական համակարգողի պաշտոնակատար Նիլս Սքոթին ու Համագործակցության եւ զարգացման ֆինանսների գծով խորհրդական Արեւիկ Անափիոսյանին:

Քննարկման առանցքում 2023թ. փետրվարի 22-ին Արդարադատության միջազգային դատարանի հրապարակած որոշումն էր, որով Դատարանը պարտավորեցրել է Ադրբեջանին մինչեւ «Հայաստանը՝ ընդդեմ Ադրբեջանի» գործով վերջնական որոշման կայացումը ձեռնարկել բոլոր միջոցները՝ երաշխավորելու Լաչինի միջանցքով քաղաքացիների, տրանսպորտային միջոցների եւ բեռների՝ երկու ուղղություններով անխափան տեղաշարժը: Ընդգծել ենք, որ Արդարադատության միջազգային դատարանի՝ միջանկյալ միջոցների կիրառման որոշումն ունի պարտադիր ուժ եւ ստեղծում է միջազգային իրավական պարտավորություններ Ադրբեջանի համար: Ի հավելումն՝ շեշտել ենք, որ, չնայած պարտադիր լինելուն, Արդարադատության միջազգային դատարանի պահանջը դեռեւս չի իրականացվել Ադրբեջանի կողմից: Անդրադարձ ենք կատարել նաեւ Հայաստանում ՄԱԿ-ի գրասենյակի հետ համագործակցության զարգացմանը եւ ընդգծել հանձնաժողովի գործունեության ոլորտներում համատեղ ծրագրերի իրականացման կարեւորությունը»:

ԿԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻՆ «ՉՈՒՊԱՉՈՒՊՍ» Է ՆՎԻՐԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթը իր բացառիկ աղբյուրներից տեղեկացավ, որ ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ Հակոբ Արշակյանը մարտի 8-ի կապակցությամբ ՔՊ խմբակցության կին պատգամավորներին չուպաչուպս է նվիրել: Արշակյանը իր նվերին «պաշտոնական» տեսք տալու համար այն մատուցել է Ազգային ժողովի հատուկ լոգոտիպով տոպրակներով: Տոպրակները նա վերցրել է ԱԺ աշխատակազմից, քանի որ ԱԺ-ն պարբերաբար պատվիրում է տոպրակներ եւ ունենում պահեստում՝ տարբեր հյուրերի կամ այցելությունների ժամանակ ինչ-որ բան նվիրելիս կիրառելու համար: ՔՊ-ական կանայք ծաղրել են Արշակյանի այս քայլը, իսկ ոմանք էլ պարզապես աղբն են նետել ԱԺ փոխնախագահի նվիրած չուպաչուպսերը՝ համարելով դա անարգանք իրենց նկատմամբ: ՔՊ-ական կանայք խոսակցության ժամանակ իրենց դժգոհությունն են հայտնել, որ նույնիսկ մանկահասակ երեխաներին նման նվերներ չեն տալիս: Ի դեպ, որոշ ՔՊ-ականներ փորձում էին երեկ արդարացնել Արշակյանին, թե նա 1 շաբաթով Հնդկաստանում էր, գուցե օգնականները կամ փոխնախագահի աշխատակազմն է կազմակերպել այդ ծաղրանքը: Ամեն դեպքում, խայտառակություն են բնութագրում ՔՊ-ում ԱԺ փոխխոսնակ Հակոբ Արշակյանի նվերը կին գործընկերներին:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ՀԱՊԿ ՈՐՈՇՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Հայաստանը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության գլխավոր քարտուղարի տեղակալի՝ իր քվոտայից հրաժարվելու առաջարկ է ներկայացրել: Այս մասին առավոտից տարածվող տեղեկությունները կեսօրին հաստատեց ՀՀ ԱԳՆ մամուլի քարտուղար Վահան Հունանյանը:

Հիշեցնենք, որ անցնող ամիսների ընթացքում Հայաստանը մերժել էր հայ-ադրբեջանական սահմանին ՀԱՊԿ դիտորդներ տեղակայելու առաջարկը, դրան հաջորդեց նոյեմբեր ամսին նաեւ այն, որ Նիկոլ Փաշինյանը Երեւանում տեղի ունեցած ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի հերթական նիստին հրաժարվեց ստորագրել «ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի հռչակագրի եւ Հայաստանի Հանրապետությանը օժանդակություն ցուցաբերելու համատեղ միջոցառումների մասին» փաստաթղթերը: Այս տարի՝ հունվար ամսին, հայտնի դարձավ նաեւ այն, որ Հայաստանը հրաժարվել է հյուրընկալել ՀԱՊԿ «Անկոտրում եղբայրություն» խորագիրը կրող զորավարժությունները ՀՀ տարածքում:

Փաշինյանն ասել էր, որ Հայաստանն աննպատակահարմար է համարում ընթացիկ տարում Հայաստանում Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) զորավարժությունների անցկացումը: «ՀՀ պաշտպանության նախարարն արդեն իսկ ՀԱՊԿ միավորված շտաբին գրավոր տեղեկացրել է, որ մենք ՀՀ-ում նման զորավարժություններ անցկացնելն այս իրավիճակում նպատակահարմար չենք համարում, եւ այդ զորավարժությունները ՀՀ-ում համենայնդեպս այս տարի չեն կայանա»,- հայտնել էր Փաշինյանը:

Այս տեմպով շարունակվելու դեպքում Հայաստանի ՀԱՊԿ անդամակցությունը կսկսի ընդհանրապես արհեստական բնույթ կրել, ապա անդամակցությունը դադարեցնելը պարզապես կդառնա կարճ տեխնիկական հարց: Խրամչիխինը չի բացառում նաեւ, որ այս քայլով հայկական կողմը փորձում է հաճոյանալ Արեւմուտքին, քանի որ եթե Հայաստանը վերջնականապես աշխարհաքաղաքական ընտրություն է կատարում՝ Արեւմուտքի օգտին, Արեւմուտքն ակնկալում է, որ Հայաստանը լքի ՀԱՊԿ-ը:

Ընդհանրապես ՀԱՊԿ-ը մշտապես էլ խնդրահարույց է եղել իր բնույթով, ՀԱՊԿ աշխատանքներում մշտապես տարաձայնությունների լուրջ գործոն է եղել, սակայն դա հնարավորինս հարթվել է Ռուսաստանի կողմից: Եթե չեմ սխալվում, ՀԱՊԿ-ը լքելուն վերաբերող հայտարարություններ կամ ակնարկներ Արեւմուտքի կողմից հնչել են, բայց Արեւմուտքի կողմից չկան նաեւ հստակ այլ երաշխիքներ, իսկ տարածաշրջանում անվտանգային իրավիճակը չափազանց փխրուն ու անկայուն է:

ԵՄ առաքելության մուտքը ՀՀ եւս առանցքային իրադարձություն էր, որը Հայաստանի կողմից որոշակի անվտանգային մեխանիզմ է դիտարկվում. Հայաստանում հույս ունեն, որ ապագայում ՀՀ-ն ավելի լուրջ անվտանգային երաշխիքներ կստանա Արեւմուտքից, այդ պատճառով ՀԱՊԿ-ի ուղղությամբ անընդհատ նման քայլեր են նախաձեռնվում, եւ սա կշարունակվի:

Եթե Ռուսաստանի օգտին իրավիճակ փոխվի, գուցե այս գիծն այս ձեւով չշարունակվի, սակայն սա Հարավային Կովկասում մեր տեսած ամենաթեժ աշխարհաքաղաքական պայքարի փուլերից է, երբ Արեւմուտքը որոշակի հաջողություններ է գրանցել աշխարհաքաղաքական հավասարակշռության հարցում, որն էլ իրեն զգացնել է տալիս:

Ն.Հ.

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՅՑԵԼԵԼ Է ԼԱՉԻՆԻ ՄԱՆԱՊԱՂ

Դեսպանը Քվինն այցելեց Լաչինի միջանցքի սկզբնամաս, որը շուրջ երեք ամիս փակ է բնականոն երթեւեկության համար. այս մասին հայտնում է Երեւանում ԱՄՆ դեսպանատունը:

Նշվում է, որ Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը դեսպան Քվինին ներկայացրեց Լաչինի միջանցքի շրջափակման հետեւանքներն ու դրա ազդեցությունը հարյուրավոր մասնատված ընտանիքների վրա: Մարզպետ Ղուկասյանը նաեւ անդրադարձավ շրջափակման հետեւանքով տուժածներին պետության կողմից ցուցաբերված աջակցությանը: Դեսպան Քվինը կրկնեց Լաչինի միջանցքն անհապաղ վերաբացելու մասին պետքարտուղար Բլինքենի կոչը:

ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյանը մարտի 9-ին հանդիպել է Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) հայաստանյան առաքելության ղեկավար Իվա Պետրովայի գլխավորած պատվիրակությանը եւ ներկայացրել Հայաստանի տնտեսության առկա միտումները: ԿԲ նախագահը ներկայացրել է 2022 թվականի Հայաստանի ֆինանսական հատվածի արդյունքները, տնտեսության առկա միտումները, խոսել 2023 թվականի ակնկալիքների մասին:

ԱՄՀ-ի գործընկերների հետ քննարկվել են գների եւ ֆինանսական կայունությանը, մակրոպրուդենցիալ քաղաքականությանը վերաբերող հարցեր:

ԿԺԱՄԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Ապրիլի 2-5-ը Հայաստանի Հանրապետություն կժամանի Լեհաստան-Հայաստան բարեկամական խմբի ղեկավար Ռադոսլավ ՖՈԳԻԵԼԻ գլխավորած պատվիրակությունը: ArmLur.am-ը տեղեկացավ, որ պատվիրակությանը դիմավորելու է ՔՊ խմբակցության պատգամավոր Արուսյակ Զուլհակյանը: ԱԺ նախագահի կարգադրության համաձայն՝ պատվիրակության ընդունելությունը կկազմակերպվի Հայաստանի Հանրապետության՝ 2023 թվականի պետական բյուջեով Ազգային ժողովին այդ նպատակի համար հատկացված միջոցների հաշվին:

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵԼ Է

ԿԵՂԾ ՎԱՐԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ քննչական կոմիտեի հատկառես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչությունում ավարտվել է 108 տուժողից խարդախությամբ շուրջ 101 մլն ՀՀ դրամի գույք եւ գումար հափշտակելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթով՝ 3 մեղադրյալի մասով նախաքննությունը:

Քննությամբ ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ Երեւան քաղաքի 40-ամյա բնակիչը 2020թ. ամռանը 32-ամյա ծանոթից առաջարկ է ստացել ստանձնել վերջինիս կողմից հիմնադրված եւ տնօրինվող կեղծ վարկային ընկերությունների գրասենյակների տնօրենի գործառույթը:

Առաջարկն ընդունելով՝ 40-ամյա տղամարդը 2020թ. հունիսից 2021 թվականի ապրիլ ամիսն ընկած ժամանակահատվածում, համաձայնեցված համախոհությամբ, 47 եւ 22-ամյա երկու կանանց եւ ինքնությունները չպարզված այլ անձանց հետ ծանոթի կողմից փաստացի հիմնադրված, սակայն առանց պետական գրանցման 14 տարբեր անվանումներով իբրեւ վարկային կազմակերպություններ ներկայացվող գրասենյակների անունից Fաձebook.ձօշ սոցիալական ցանցում գրանցած էջերով թիրախային գովազդի միջոցով տարածել է շահավետ պայմաններով վարկեր տրամադրելու վերաբերյալ հայտարարություններ:

Հայտարարությունների հիման վրա՝ իրենց դիմած եւ վարկեր ստանալու ցանկություն հայտնած քաղաքացիներին հրավիրել են իբրեւ վարկերի տրամադրման միջնորդ կազմակերպություն հանդիսացող, նախապես Երեւան քաղաքի տարբեր հասցեներում վարձակալված գրասենյակներ, որտեղ ներկայացրել են, թե, իբր, ցածր տոկոսներով միջնորդավճարի դիմաց կարող են կազմակերպել տարբեր բանկերից եւ վարկային կազմակերպություններից վարկային գումարների ուղղակի կամ անուղղակի ձեւով, այն է՝ վերջիններիս անվամբ ապառիկ եղանակով ապրանքներ ձեռք բերելու, դրանք վաճառելու եւ գումարը տրամադրելու եղանակով ստացումը: Այնուհետեւ հաճախորդներին ուղեկցել են տարբեր բանկեր, վարկային եւ առեւտրային կազմակերպություններ եւ չարաշահելով վերջիններիս վստահությունը՝ վերցրել են նրանց տրամադրված վարկային գումարները, ապրանքները կամ դրանց ստացման կտրոնները: Ապա խաբեությամբ ներկայացրել են, թե, իբր, անհրաժեշտ է կատարել վերջնահաշվարկ, իրացնել ձեռք բերված ապրանքները, հաշվարկել միջնորդավճարների չափը, որից հետո միայն ամբողջությամբ կտրամադրեն խոստացված գումարները, սակայն այդ գումարները չեն տրամադրել եւ հափշտակել են:

Բացի այդ, իրենց դիմած անձանց ուղեկցել են ՀՀ բանկերից մեկի տարբեր մասնաճյուղեր, խաբեությամբ հաճախորդներից ստացել են վերջիններիս անուններով բացված «Մոբայլ բանկինգ» ծառայության մուտքի տվյալները, որոնց միջոցով բանկից առցանց ստացել են վարկային գումարներ: Չարաշահելով քաղաքացիների վստահությունը՝ գումարները նրանց չեն տրամադրել, եւ փոխանցելով այլ անձանց հաշիվների՝ հետագայում կանխիկացնելու եղանակով հափշտակել են:

Նախաքննությամբ պարզվել է, որ նշված անձանց կողմից գործադրված խարդախության վերոնշյալ սխեմայի կիրառմամբ բազմաթիվ քաղաքացիներից խարդախությամբ հափշտակվել է առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 101.182.461 ՀՀ դրամ գումար:

Ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ՝ 40-ամյա տղամարդուն եւ հիշյալ երկու կանանց մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով: Երկու կանանց նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է բացակայելու արգելքը, տղամարդու նկատմամբ բացակայելու արգելքը եւ գրավը՝ 2 միլիոն դրամի չափով:

Վերջիններիս վերաբերյալ մասն առանձնացվել է առանձին վարույթում, որով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերն ուղարկվել են դատարան: Ավելի վաղ ՀՀ քննչական կոմիտեն տեղեկացրել է, որ մեղադրյալներից մեկի՝ հիշյալ 32-ամյա ծանոթի մասով քրեական գործի նախաքննությունը եւս ավարտվել է եւ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել դատարան:

ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՊՔ

ԻՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ Է

Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Ս.Հ.-ն, 2022 թվականի սեպտեմբերին մաքսանենգությամբ իրացնելու նպատակով, Հայաստանից օտարերկրյա պետություններ առաքելու համար ապօրինի ձեռք է բերել եւ պահել առանձնապես խոշոր չափերով՝ 10 հազար 165.95 գրամ Մեթամֆետամին տեսակի թմրամիջոց:

Քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգության քննության գլխավոր վարչությունում կատարված նախաքննությամբ պարզվել է, որ Ս.Հ.-ն 3 հազար 270.1 գրամ Մեթամֆետամին տեսակի թմրամիջոցը փոստային առաքում իրականացնող ընկերության միջոցով մաքսանենգությամբ, առաքել է Ավստրիայի Հանրապետություն, իսկ 3 հազար 467.62 գրամը հանձնել է այլ ընկերության՝ փորձելով դրանք առաքել Ավստրալիա, սակայն չի կարողացել ավարտին հասցնել հանցագործությունը. թմրամիջոցը հայտնաբերվել է ՊԵԿ Մաքսանենգության դեմ պայքարի վարչության կողմից, իսկ Ս.Հ.-ի ժամանակավոր բնակության վայրում՝ հյուրանոցում, հայտնաբերվել է նաեւ 3 հազար 428.23 գրամ Մեթամֆետամին տեսակի թմրամիջոց:

2023 թվականի փետրվարի 8-ին, հսկող դատախազի որոշմամբ, Ս.Հ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի կամ դրանց ածանցյալների ապօրինի շրջանառությունն իրացնելու նպատակով կամ դրանք ապօրինի իրացնելը), 44-399-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով եւ 399-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (առանձնապես խոշոր չափերի թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, դրանց պատրաստուկների, դրանց համարժեք նյութերի կամ դրանց ածանցյալների կամ դրանց պրեկուրսորների մաքսանենգությունը):

Ս.Հ.-ին ներկայացվել է մեղադրանք. որպես խափանման միջոց է կիրառված կալանքը:

Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է. 2023 թվականի մարտի 2-ին, հսկող դատախազի որոշմամբ, մեղադրական եզրակացությունը հաստատվել, քրեական վարույթի նյութերի հետ հանձնվել է դատարան:

ԼՈՒՐԵՐ

ԹԱՓՈՒՐ ՀԱՍՏԻՔ

ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովը հայտարարել է Քննչական կոմիտեում

ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակը համալրելու հերթական ընդունելությունը:

Անհրաժեշտ փաստաթղթերն ընդունվում են մինչեւ 2023թ. մարտի 31-ը՝ ամեն աշխատանքային

օր: Ընդ որում, փաստաթղթերի ընդունման գործընթացը դյուրինացնելու նպատակով նախատեսվել է, որ փաստաթղթերը՝ ծրարավորված, դիմորդները պետք է գցեն ՀՀ քննչական կոմիտեի կենտրոնական ապարատի վարչական շենքի 1-ին հարկում տեղադրված փոստային արկղի մեջ:

Ընդունելության գրավոր քննությունը տեղի կունենա 2023 թվականի ապրիլի 4-ին՝ ժամը 10:00-ին, ՀՀ քննչական կոմիտեում (ք. Երեւան, Մամիկոնյանց 46/5):

Գրավոր քննությանը մասնակցելու հայտ կարող են ներկայացնել այն անձինք, որոնք կներկայացնեն պահանջվող փաստաթղթերը եւ միաժամանակ կբավարարեն «Հայաստանի

Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածով սահմանված

պահանջներին:

Գրավոր քննության հարցերը կազմված են ՀՀ քրեական իրավունքի, քրեական դատավարության իրավունքի եւ քրեագիտության բնագավառներից: Գրավոր քննությունից դրական (50 միավոր) գնահատական ստացած հայտատուների հետ սեղմ ժամկետում անցկացվելու է բանավոր քննություն: Ընդունելությանը մասնակցելու նպատակով ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին, դիմումների ընդունման, ինչպես նաեւ գրավոր քննության ընթացակարգերին, համապատասխան կոնտակտային տվյալներին եւ հետաքրքրող այլ տեղեկատվության կարելի է ծանոթանալ ՀՀ քննչական կոմիտեի պաշտոնական կայքի «Նորություններ» բաժնի «Հայտարարություններ» ենթաբաժնում զետեղված հայտարարությունից:

ԳՈՂԱՑԵԼ Է ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆ

Ոստիկանության Վաղարշապատի բաժնի քրեական հետախույզները օպերատիվ տեղեկություններ էին ստացել, որ մարտի 8-ի ժամը 23:00-ի սահմաններում Ակնաշեն գյուղի 40-ամյա մի բնակիչ ապօրինի մուտք էր գործել համագյուղացի թոշակառու կնոջ տուն եւ բռնություն գործադրելով՝ պահանջել էր ոսկյա զարդեր ու փող, այնուհետեւ հափշտակելով կարի մեքենան՝ հեռացել էր:

40-ամյա տղամարդը հայտնաբերվել, ձերբակալվել եւ տեղափոխվել է ոստիկանության Վաղարշապատի բաժին: Նա եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 9-ից 10-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 67 դեպք, որոնցից 7-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱՋ ՁԵՌՔԸ ՉԳԻՏԻ, ԹԵ ԻՆՉ Է ԱՆՈՒՄ ՁԱԽԸ

«Ժողովուրդ» օրաթերթը հարցում է ուղարկել Տավուշի մարզպետարան, թե ներկայումս Տավուշի մարզում որքան են կազմում ոռոգելի հողատարածքները: 2023թ. փետրվարի 9-ին տեղեկատվական հարցումանը մարզպետարանից պատասխանել են, որ մարզի ոռոգելի հողատարածքները, ըստ մարզի համայնքների կողմից ներկայացված հաշվետվության, կազմում է 6 հազար 428 հեկտար: Ամեն տարի, Հայաստանի պետական բյուջեի, միջազգային դոնոր եւ բարեգործական կազմակերպությունների ֆինանսավորմամբ, մարզի ոռոգման համակարգում վերակառուցման, վերանորոգման, ընդլայնման ծրագրեր են իրականացվում, սակայն ո՞ւր է այդ աշխատանքների արդյունքը: Տավուշի մարզկենտրոն Իջեւան քաղաքի բնակիչ, Ազգային Ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գառնիկ Դանիելյանը Տավուշի մարզի ոռոգվող հողատարածքների վերաբերյալ պատգամավորական հարցում է կատարել ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, որտեղից հայտնել են, որ Տավուշի մարզում գյուղատնտեսական նշանակության վարելահողերը կազմում են 25 485,3 հեկտար, որից ոռոգելի է 3759,9 հեկտարը, բազմամյա տնկարկները կազմում են 1981,8 հեկտար, որից ոռոգվող՝ 1646?4 հեկտար: Էկոնոմիկայի նախարարության պատասխանից ստացվում է, որ Տավուշի մարզում ոռոգելի հողատարածքների ընդհանուր թիվը կազմում է 5406, 3 հեկտար, մինչդեռ ՀՀ կառավարության տարածքային ստորաբաժանում հանդիսացող Տավուշի մարզպետարանը լրագրողիս հայտնել է, որ մարզում ոռոգելի հողատարածքների ընդհանուր թիվը կազմում է 6 հազար 428 հեկտար: Այդ թվերի մեջ էական տարբերություն կա. ստացվում է, որ կառավարության աջ ձեռքը չգիտի, թե ինչ է անում ձախը: 2017 թվականին նախատեսվում էր Տավուշի մարզում կառուցել Հախումի եւ Կողբի ջրամբարները, դրանցում ընդհանուր առմամբ կուտակել 2 միլիոն խորանարդ մետր ջուր, սակայն սահմանագոտում այդ ջրամբարների կառուցման ծրագրերը մնացին թղթի վրա: Նիկոլ Փաշինյանի իշխանության գրեթե հինգ տարիների ընթացքում Տավուշի մարզում ոչ մի ջրամբար չի կառուցվել: Տավուշի մարզի Աղստեւ, Ոսկեպար, Հախում, Քարահան եւ այլ գետերի քաղցրահամ ջրերը շարունակում են հոսել Ադրբեջան, այնտեղ կուտակվում են ոռոգման ջրամբարներում, ոռոգում Ադրբեջանի դաշտերն ու այգիները: Դեբեդ գետի ջրերը Հայաստանից հոսում են Վրաստան, այնտեղից էլ՝Ադրբեջան: Վերջին տարիներին՝ ամռան ամիսներին, Ադրբեջանում երաշտ է, Տավուշի սահմանագոտում ոռոգման ջրամբարների կառուցումից հետո Ադրբեջանը ոռոգման ջրի առումով որոշակի կախվածություն կունենար Հայաստանից:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ԵՆ

ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԵԼ Է ԽՈՇՈՐ ՉԱՓԻ ՎՆԱՍ

ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչությունը տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի շրջանակում բացահայտել է Վրաստանից ներմուծումները՝ որպես ԵԱՏՄ անդամ պետություններից ներմուծումներ ձեւակերպելու բազմաթիվ դեպքեր:

Մասնավորապես, ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչության աշխատակիցներն օպերատիվ տվյալներ էին ստացել, որ Հայաստանի Հանրապետությունում գրանցված որոշ ընկերությունների կողմից 2020-2022թթ.-ի ընթացքում ԵԱՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքները փաստացի ձեռք են բերվել եւ ներմուծվել Վրաստանից:

Ամիսներ շարունակ ձեռնարկվել են բազմակողմանի, մեծածավալ եւ արդյունավետ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, որոնց արդյունքում փաստական տվյալներ են ձեռք բերվել առ այն, որ շուրջ մեկ տասնյակի հասնող ընկերությունների իրական սեփականատիրոջ կողմից մշակվել եւ իրագործվել է հանցավոր սխեմա: Արդյունքում ընկերությունները խուսափել են առանձնապես խոշոր չափերի հարկեր վճարելուց:

Մասնավորապես, տրանսպորտային միջոցը դատարկ վիճակում հատել է հայ-վրացական սահմանը, հետո՝ վրաց-ռուսական սահմանը, այնուհետեւ վերադարձել է ու նորից դատարկ վիճակում հատել ռուս-վրացական սահմանը: ՌԴ-ում կազմվել է ՌԴ ռեզիդենտից ապրանքների ձեռք բերման կեղծ հաշիվ-ապրանքագիր եւ տարանցիկ հայտարարագիր: Տրանսպորտային միջոցն այդ հայտարարագրով հատել է ՌԴ «Վերին Լարսի» սահմանային անցակետը, սակայն Վրաստանի «Կազբեգի» սահմանային անցակետում չի ներկայացրել ՌԴ-ում կազմված կեղծ հաշիվ-ապրանքագիրը եւ տարանցիկ հայտարարագիրը ու փաստացի Վրաստան է մուտք գործել դատարկ վիճակում: Այնուհետեւ Վրաստանում ֆիզիկական անձանց ու տրանսպորտային միջոցների վարորդների անուններով ձեռք են բերվել ապրանքներ, որոնք բեռնվել են տրանսպորտային միջոց: Նշված ապրանքներով բեռնված տրանսպորտային միջոցը հատել է Վրաստանի «Սադախլո» սահմանային անցակետը՝ ձեւակերպվելով արտահանում Վրաստանից դեպի Հայաստանի Հանրապետություն, սակայն հասնելով Հայաստանի «Բագրատաշենի» սահմանային անցակետ՝ Հայաստանի մաքսային մարմնին ներկայացվել է ՌԴ-ում կազմված կեղծ հաշիվ-ապրանքագիրն ու տարանցիկ հայտարարագիրը: Նախօրոք իմանալով Վրաստանում ձեռք բերվող ապրանքների տեսականին եւ քանակները՝ ՌԴ-ում կազմված կեղծ հաշիվ-ապրանքագրում եւ տարանցիկ հայտարարագրում նշվել են ձեռք բերվող ապրանքների իրական տեսականին եւ քանակները, իսկ ապրանքների գները նշվել են մի քանի անգամ ցածր գնով:

Նկարագրված եղանակով շուրջ մեկ տասնյակի հասնող ընկերությունների կողմից 2020-2022թթ.-ի ընթացքում 72 դեպքով փաստացի Վրաստանից Հայաստանի Հանրապետության տարածք են ներմուծվել «Կինդեր ձվիկ» կոնֆետներ, մաստակներ, տնտեսական եւ այլ ապրանքներ, որոնք փաստաթղթերով ձեւակերպվել են որպես ԵԱՏՄ անդամ ՌԴ-ից ներմուծումներ:

Միաժամանակ օպերատիվ տվյալներ էին ստացվել այն մասին, որ մեկ տասնյակի հասնող ընկերությունների իրական սեփականատիրոջը պատկանող ընկերություններից մեկը նկարագրված սխեմայով պատրաստվում է Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծել ապրանքներ: Բեռը ներմուծող տրանսպորտային միջոցը Հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչության աշխատակիցների օպերատիվ հսկողության ներքո մուտք է գործել «Բագրատաշենի» սահմանային անցակետ: Վարորդի մոտից հայտնաբերվել են ներմուծված ապրանքների արտահանման փաստաթղթերը եւ նամակ, որով ՌԴ ապրանք մատակարարողը հայտնել է, որ, իբրեւ, սխալմամբ է ապրանքն ուղարկել Հայաստանի Հանրապետություն, եւ պահանջել բեռը հետ վերադարձնել: Սակայն ձեռնարկված միջոցառումների արդյունքում կանխվել է ներմուծված բեռի արտահանումը Ռուսաստան: Փաստացի հետազոտմամբ պարզվել է նաեւ, որ ներմուծված ապրանքների մակնշումները թուրքերեն լեզվով են:

Կազմված նախնական հաշվարկով պետությանը պատճառվել է առանձնապես խոշոր չափի վնաս: Առերեւույթ հանցագործության դեպքի առիթով նախաձեռնվել է քրեական վարույթ, իսկ տրանսպորտային միջոցը տեղափոխվել է Երեւան քաղաքում գտնվող մաքսային տերմինալ:

ԿԱՇԱՌՔ

ՈՉՆՉԱՅՐԵԼ ԵՆ 450 ՔՄ ԱՆՏԱՌ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական վարույթով կատարված նախաքննությամբ արդյունքներ են ձեռք բերվել այն մասին, որ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Թումանյանի անտառտնտեսություն» մասնաճյուղի տնօրեն Կ. Ղարագոզյանը 2021 թվականի ընթացքում հիշյալ անտառտնտեսությունից մթերված փայտանյութը տարբեր գնորդների վաճառելու համար նրանցից դրամներ պահանջել եւ ստացել է տարբեր չափերի կաշառք:

Մասնավորապես, պարզվել է, որ Կ. Ղարագոզյանը Ա. Բադալյանի օգտին իր լիազորությունների շրջանակում գործողություն կատարելու, այն է՝ իր ղեկավարած մասնաճյուղի անտառային ֆոնդի տարածքից 5,7մ 3 վառելափայտը նրան վաճառելու համար 2021 թ. նոյեմբերի 10-ին իր աշխատասենյակում նրանից անձամբ ստացել է 47.000 ՀՀ դրամ կաշառք, սակայն վերջինիս տրամադրել է 4մ 3 փայտանյութի մատակարարման վերաբերյալ հարկային հաշիվ: Բացի այդ, Գ. Պարանյանի օգտին իր լիազորությունների շրջանակում գործողություն կատարելու, այն է՝ նույն անտառային ֆոնդի տարածքից նրան 25մ 3 վառելափայտ վաճառելու համար Կ. Ղարագոզյանը 2021 թ. նոյեմբերի 22-ին նրանից ստացել է 117.000 ՀՀ դրամ կաշառք, իսկ մեկ այլ անձի՝Ա. Բուդաղյանին, 33 մ 3 վառելափայտ վաճառելու համար դեկտեմբերի 21-ին վերջինից պահանջել է 165.000 ՀՀ դրամ կաշառք: Նախաքննությամբ հիմնավորվել է նաեւ, որ համապատասխան ՍՊԸ-ի օգտին ակնհայտ ապօրինի անգործության, այն է՝նշված ընկերության աշխատանքային խմբի կողմից առանց համապատասխան թույլտվության «Թումանյանի անտառպետության» պահաբաժնում անցկացված գազի խողովակաշարը 2021 թվականի դեկտեմբերի ընթացքում ապամոնտաժելու հետեւանքով շուրջ 450 մ 2 մակերեսով անտառային տարածքի ոչնչացման փաստը չարձանագրելու եւ օրենքով սահմանված կարգով իրավական ընթացակարգեր չնախաձեռնելու համար ՍՊԸ ներկայացուցիչ Ռ. Սաքանյանից 2021թ. դեկտեմբերի 22-ին ստացել է 240.000 ՀՀ դրամ կաշառք:

Կաշառք պահանջելու եւ ստանալու համար «Թումանյանի անտառտնտեսություն» մասնաճյուղի տնօրեն Կ. Ղարագոզյանին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով (3 դրվագ) եւ 311-րդ հոդվածի 2-րդ մասով, իսկ Գ. Պարանյանին, Ա. Բադալյանին, Ա. Բուդաղյանին եւ Ռ. Սաքանյանին մեղադրանք է ներկայացվել՝ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 1-ին մասով:

● *Անցած 12 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 7 ՃՏՊ. 7 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ԹԱՓՈՒՐ ՀԱՍՏԻՔ

Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթն անցկացնելու նպատակով, ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 01.03.2023թ. թիվ 191-Ա հրամանով, ձեւավորվել է հանձնաժողով, եւ հաստատվել դրա անհատական կազմը: Հանձնաժողովի նախագահն է ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը: Հանձնաժողովում ընդգրկված են ԿԳՄՍՆ հանրակրթության, իրավաբանական եւ անձնակազմի կառավարման վարչությունների աշխատակիցներ, ինչպես նաեւ Կրթության զարգացման եւ նորարարությունների ազգային կենտրոնի ու Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի ներկայացուցիչներ: ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշման հավելվածով հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձեւավորման, գործունեության եւ տնօրենի նշանակման» կարգի 24-րդ կետի պահանջի համաձայն՝ ներկայացվում է մասնագիտական հանձնաժողովի հետ (ըստ անհրաժեշտության) կապ հաստատելու համար նախատեսված հեռախոսահամարը (+374-10-599-661) եւ հավակնորդի զարգացման ծրագիրը ներկայացնելու համար նախատեսված էլեկտրոնային փոստի հասցեն (handznajoghov@escs.am):

ԿՐԿԻՆ ԹԻՐԱԽՈՒՄ

Թուրքիայում շարունակում են հետապնդումները ընդդիմադիր քեմալական Ժողովրդահանրապետական կուսակցության նախկին պատգամավոր Ջենան Քաֆթանջըօղլուի նկատմամբ:

Այս անգամ նրա նկատմամբ հետաքննություն է սկսվել Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի մասին հնչեցրած խոսքերի համար, որոնք որակվել են որպես վիրավորանք: Ստամբուլի դատախազությունը հետաքննություն է սկսել նրա նկատմամբ՝ Թուրքիայի նախագահի դատական հայցի հիման վրա: Քաֆթանջըօղլուի նկատմամբ կան բազմաթիվ դատական վարույթներ, այդ թվում՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչող հայտարարությունների համար: Իշխանամետ լրատվամիջոցներում նրան հաճախ անվանում են «թուրք ազգի դավաճան»:

ՓՈՇԻՆ ՇԱՏ Է

Փոշու պարունակությունը գերազանցել է սահմանային թույլատրելի կոնցենտրացիան Կենտրոն վարչական շրջանում ամբողջ շաբաթվա ընթացքում, Արաբկիրում՝ մարտի 2-ին, 4-ին, 6-ին եւ 7-ին, Շենգավիթում՝ մարտի 6-ին եւ 7-ին, Նոր Նորքում՝ գրեթե ամբողջ շաբաթվա ընթացքում: Այս մասին հայտնում են Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոնից: Ազոտի երկօքսիդի պարունակությունը գերազանցել է սահմանային թույլատրելի կոնցենտրացիան Կենտրոնում մարտի 6-8-ը, Նոր Նորքում՝ մարտի 2-ին եւ 8-ին: Ծծմբի երկօքսիդի պարունակությունը չի գերազանցել սահմանային թույլատրելի կոնցենտրացիան:

«ԱՀԱԲԵԿԻՉՆԵՐ»

ՍԱԿԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱ ԵՆ ԴԱՐՁԵԼ

Բաքվում անազատության մեջ են մնում տասնյակ հայ ռազմագերիներ, որոնց Ադրբեջանն անվանում է «ահաբեկիչներ» եւ չի ցանում հանձնել Հայաստանին: BBC-ի ռուսական ծառայությունը անդրադարձել է Ադրբեջանում դահավոր հայ ռազմագերիներին՝ նշելով, որ նրանք սակարկության առարկա են դարձել փակուղի մտած բանակցություններում:

«Հայ գերիներն Ադրբեջանում ահաբեկիչնե՞ր, պատանդնե՞ր, թե՞ սակարկությունների առարկա». այսպես է վերնագրված պարբերականի ծավալուն հոդվածը: Այն հիշեցնում է, որ 2021 թ.-ի ամռանը Բաքվի դատարանը 13 հայ ռազմագերիների դատապարտեց 6 տարվա ազատազրկման՝ մեղադրելով «ահաբեկչության, զենքի ապօրինի պահման եւ կրման, սահմանի ապօրինի հատման, ինչպես նաեւ «զինված կազմավորումներ» ստեղծելու համար»:

BBC-ի ռուսական ծառայությունը շեշտում է, որ հայ զինվորականներին շրջապատել եւ ձերբակալել են Ղարաբաղյան երկրորդ պատերազմի ավարտից հետո: Պարբերականը նշում է, որ այդ ժամանակ պարզ չէր, թե ում վերահսկողության տակ է գտնվում Հին Թաղեր (Հինթաղլար) գյուղը, եւ մանրամասնորեն ներկայացնում է հայ զինվորների՝ գերի ընկնելու հանգամանքները:

Հոդվածի հեղինակը նաեւ զրուցել է Ադրբեջանում դատապարտված գերիներից մեկի՝ Մանուկ Մարտոյանի ընտանիքի անդամների հետ, Հայաստանի մարդու իրավունքների նախկին պաշտպան Արման Թաթոյանի եւ փաստաբան, ՄԻԵԴ-ում ռազմագերիների հարցերով Հայաստանի ներկայացուցիչ Սիրանույշ Սահակյանի հետ:

Բաքուն պնդում է, թե Ադրբեջանում կալանավորված է 33 հայ ռազմագերի, սակայն, ըստ Արման Թաթոյանի, այս թիվն իրականությանը չի համապատասխանում: Սիրանույշ Սահակյանն իր հերթին նշել է, որ, 33 ռազմագերիներից զատ, Ադրբեջանում կարող է լինել եւս 80 գերի:

BBC-ն նշում է, որ ադրբեջանական իրավապաշտպանների խոսքով՝ զինվորականների դատավարություններն անց են կացվել իրավական նորմերի խախտումներով:

«Դատավարություններն ընթանում էին հապճեպ, առանց գործի մեջ խորամուխ լինելու. չէ՞ որ բոլորն էլ հասկանում էին, որ վաղն այդ մարդիկ դառնալու են փոխանակման եւ սակարկության առարկա հայկական կողմի հետ կամ ամերիկյան կամ նույնիսկ սիրիական, քանի որ այնտեղ կա Սիրիայի երկու քաղաքացի», - նշում է ադրբեջանցի իրավապաշտպան Արիֆ Յունուսը:

Փորձագետները նշում են, որ Ադրբեջանին գերիները հարկավոր են «տարբեր քաղաքական ժեստերի» համար, օրինակ՝ երբ տարածաշրջան եկավ ԱՄՆ պետքարտուղարի ներկայացուցիչը, Ադրբեջանի իշխանությունները Հայաստանին հանձնեցին 15 գերու:

Հոդվածի հեղինակը նաեւ նշում է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության պայմանագրի ստորագրումը բախվում է Լեռնային Ղարաբաղի հայերի իրավունքների պաշտպանության խնդրին. հայերը վախենում են իրենց անվտանգության համար, քանի որ Ադրբեջանի իշխանություններն աջակցում են երկրում հայատյացությանը:

ՆՈՐ ՀԱՐՑՈՒՄ

Ո՞Ր ՈՂՈՐՏՆ Է ԱՄԵՆԱԿՈՌՈՒՄՊԱՑՎԱԾԸ

«Գելափ» ինթերնեյշնլը նոր հարցում է իրականացրել: Հարցազրույցներն իրականացվել են Հայաստանի 10 մարզերում (մարզկենտրոններ, այլ քաղաքներ, գյուղական համայնքներ) եւ Երեւանի բոլոր համայնքներում՝ ՀՀ բնակչության բաշխմանը համամասնորեն: Հարցվողների հեռախոսահամարներն ընտրվել են դատահական գեներացված համարներից:

Ինչպե՞ս է փոխվել կոռուպցիայի տարածվածությունը Հայաստանում 2018թ. հեղափոխությունից հետո. այս հարցին 12.7 տոկոսը պատասխանել է, թե այն միանշանակ աճել է, 19.6 տոկոսը պատասխանել է, թե ավելի շուտ աճել է, 43.4 տոկոսը պատասխանել է, թե ավելի շուտ նվազել է, 16.9 տոկոսը պատասխանել է, թե միանշանակ նվազել է, իսկ 7.4 տոկոսն էլ դժվարացել է պատասխանել:

Հարցվածները 5-միավորանոց սանդղակում քրեակատարողական հիմնարկների կոռումպացման աստիճանը 3 են գնահատել, մաքսային ծառայության եւ առողջապահության համակարգը՝ 2.9 տոկոս:

«Գելափ» ինթերնեյշնլ ասոցիացիան նոր հարցում է իրականացրել: Հարցվողներից նաեւ հետաքրքրվել են՝ փետրվարի 23-ին Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանի որոշման համաձայն՝ Ռուբեն Վարդանյանն

ազատվեց Արցախի պետական նախարարի պաշտոնից, ինչպես են վերաբերվում այս որոշմանը:

Այսպիսով, 16.1 տոկոսը լիովին դրական է վերաբերվում այդ որոշմանը, 19.5 տոկոսն ավելի շուտ դրական է վերաբերվում այդ որոշմանը, 19.5 տոկոսն ավելի շուտ բացասական է վերաբերվում այդ որոշմանը: Ընդհանրապես բացասական է վերաբերվում հարցվածների 22.6 տոկոսը, իսկ 22.3 տոկոսը դժվարացել է պատասխանել այդ հարցին:

Հարցվածներին տրվել է այսպիսի հարց. հունվարի 19-ին Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղի տարածքում տեղակայված զորամասի կացարանում բռնկված հրդեհի հետեւանքով զոհվել է 15 զինծառայող: Նույն օրը վարչապետ Նիկոլ Փաշինյանը ներկայացրեց դեպքի պատճառի վարկածը, ըստ որի՝ սպան 5-լիտրանոց բենզինի տարայով փորձել է վառել վառարանը, ինչի հետեւանքով տեղի է ունեցել հրդեհը:

Որքանո՞վ եք վստահում Նիկոլ Փաշինյանի կողմից առաջ քաշած պաշտոնական վարկածին. հարցվածների 6.5 տոկոսը պատասխանել է, թե լիովին վստահում է Փաշինյանի վարկածին, 12.3 տոկոսը նշել է, թե ավելի շուտ վստահում է, 18.8 տոկոսը հայտարարել է, թե ավելի շուտ չի վստահում, 51.7 տոկոսը նշել է, թե ընդհանրապես չի վստահում, իսկ 10.6 տոկոսն էլ դժվարացել է պատասխանել հարցին: Խոսքը 2023 թվականի հունվարի 19-ին Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղի տարածքում տեղակայված զինվորական կացարանում տեղի ունեցած ողբերգական դեպքի մասին է, երբ 15 զինվոր զոհվեց, 3-ը ծանր վիճակում տեղափոխվեց հիվանդանոց:

Նույն օրը վարչապետ Նիկոլ Փաշինյանը ներկայացրեց դեպքի պատճառի վարկածը: Հատկանշական է, որ զոհված զինծառայողների ծնողները եւս չեն հավատում պաշտոնական վարկածին. նրանք սեփական հետաքննություն են սկսել:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՊԵՏԱԿԱՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ

«ՀՈՎԵՐ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ ՆՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ

«Հովեր» պետական կամերային երգչախումբը մարտի 14-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը հանդես կգա համերգով: Կհնչեն Յոհան Սեբաստիան Բախի յոթ մոտետները, որոնք մեկ համերգի շրջանակում Հայաստանում ներկայացվում են առաջին անգամ: Խմբավար Սոնա Հովհաննիսյանի խոսքով՝ ինչպես «Հովեր» պետական երգչախմբի գործունեության բոլոր շրջաններում, այսօր եւս ծրագրերը մշակվում են՝ ըստ ներկայումս երգչախմբի կազմում ընդգրկված երգիչների ունակությունների, ձայնային առանձնահատկությունների եւ հմտությունների, ինչպես նաեւ նրանց կողմից այս կամ այն ծրագրին անդրադառնալու առաջարկների:

«Անցյալ տարեվերջին Երեւանում եւ Թբիլիսիում «Վրաստանի սիմֆոնիետտայի» հետ համատեղ երգչախումբը հաջողությամբ հանդես եկավ նոր ծրագրով, որի շարունակությունը կարելի է համարել Բախի յոթ մոտետները մեկ համերգային ծրագրում ներկայացնելու նախաձեռնությունը: Ժամանակը կարճ է, եւ բոլորս հասկանում ենք, որ Գերմանիայում ձեւավորված խմբերգային երաժշտության ավանդույթների հարյուրամյակների ընթացքում հղկված ոճին ու մտածողությանն անդրադառնալը մարտահրավեր է: Կարծում եմ՝ արժե անգամ ձախողել, բայց գնալ այս ճանապարհով: Ինչպես ասել է Սենեկան, իրական հաճույքը բարդությունն է»,- նշում է Հովհաննիսյանը:

«Հովեր»-ը գործունեության տարբեր շրջաններում կատարել է Բախի բազմաթիվ կանտատներ՝ 2000-ականներին՝ «Զարչարանքներ ըստ Հովհաննու» եւ «Զարչարանքներ ըստ Մաթեւոսի» օրատորիաները, (դիրիժոր՝Զ. Վարդանյան): «Այսօր մենք առանձնահատուկ օրեր ենք ապրում: Կարդում ենք, լսում բազմաթիվ հրաշալի կատարումներ՝ անվերջ փորձելով յուրացնել այս պարտիտուրները, որոնք իրենց ողջ հարստությամբ ու հմայքով ներխուժել են մեր կյանք՝ այն դարձնելով ոգեղեն ու պրոֆեսիոնալ առումով բացառիկ: Բախի երաժշտությունը «հույս է եւ ամենաանկեղծորեն չհնացող նախասկիզբ», (ընկերներիցս մեկի խոսքով) քրիստոնեական մշակույթի կենդանի ներկայություն, պարզապես մտերիմ ընկեր ու սփոփանք, համամարդկային երաժշտական միջավայրի մեջ յուրաքանչյուրիս մի կաթիլ կյանքի բերկրանքն ապրելու շնորհ:

Բախի մոտետները բազմաթիվ սերունդների երաժշտամտածողության կարեւորագույն դպրոց են՝ հանձին իր ստեղծողի՝ Բախ-ուսուցչի,-ընդգծում է խմբավարն ու հավելում:- Օրերս Սվետլանա Նավասարդյանին ասել է, որ բոլորս շատ հուզված ենք եւ անհանգիստ առաջիկա համերգի կապակցությամբ, նույնիսկ խնդրել է չգալ համերգին: Խմբավար Նարինե Ոսկանյանն էլ նշում է՝ Բախի յուրաքանչյուր ստեղծագործության անդրադարձը երգչախմբի համար մշտապես լինում է մեծ սպասումով եւ սրտի թրթիռով: Բախն այն գագաթն է, որին հասնելով՝ կարողանում ես ինքնամաքրվել, մոտենալ Աստծուն, խորհել հավիտենության մասին եւ զգալ կատարելության ուժը: Բախն իր ողջ կյանքն ապրեց՝ ծառայելով Աստծուն, եւ անգամ մահվան եւ հուղարկավորության առիթներով գրված այս մոտետներում մենք կարող ենք տեսնել այն մեծ հավատն Աստծո հանդեպ, որը շարժիչ ուժ էր Բախի համար: Մահը դիտել ոչ թե կյանքի ավարտ, այլ հավիտենականության սկիզբ, ոչ թե սգալու, այլ մխիթարություն գտնելու եւ Աստծուն միանալու միջոց: Այստեղ մենք կտեսնենք ցնծություն, փառաբանություն, աղոթք եւ ապաշխարություն»:

Ոսկանյանը Բախի երաժշտությունը գոթական տաճար է համարում, որտեղ արտաքուստ թվացող գերհագեցված պոլիֆոնիկ պատկերներն ու բոլոր զարդարանքները, իրենց ճիշտ դերաբաշխումների շնորհիվ, ստանում են այնպիսի թեթեւություն, ինչպիսին ստացել է գոթական տաճարը՝իր կամարների ճիշտ օգտագործման շնորհիվ: Նրա խոսքով՝երբեմն թվում է, թե Բախը փորձել է կատարողի առջեւ դնել անհաղթահարելի թվացող խնդիրներ, երկարաշունչ ֆրազներ, որոնց կատարումը, անշուշտ, երաժշտից պահանջում է բարձր պրոֆեսիոնալիզմ եւ ոճի իմացություն:

«Դրա հետ մեկտեղ Բախի երաժշտությունն այնպիսի ներդաշնակություն ունի, որ նման է մի վարարող գետի, տանում է կատարողին իր անհուններով՝ անտեսելով բոլոր բարդությունները: Եվ հենց այդ ժամանակ էլ արթնանում է այն ոգին, որն ամենաէականն է հատկապես Բախի ստեղծագործությունների դեպքում: Բախի երաժշտության մեջ այնքան պատկերայնություն կա, որ այն սկսում է նմանվել նաեւ գեղանկարին: Սա գալիս է բառի հանդեպ Բախի վերաբերմունքից, թե ինչպես է նա կարողանում յուրաքանչյուր բառի առոգանությունն արտահայտել երաժշտության մեջ: Յուրաքանչյուր երաժշտական միտք, տեխնիկական հնարք արտահայտվում է՝ ենթարկվելով տեքստի բովանդակությանը: Ահա այս ամենը գերում է մեզ՝երաժիշտներիս, յուրաքանչյուր անգամ անհագ ծարավով անդրադառնալ Բախի ստեղծագործություններին, եւս մեկ անգամ հնարավորություն ունենալ խոսել Աստծո հետ երաժշտության միջոցով: Բախի երաժշտությունը կրոն է, որ մենք դավանում ենք»,- եզրափակում է Նարինե Ոսկանյանը:

ԿԱՐԻԵՐԱ

ՄԱՀԱՑԵԼ Է ԴԻՐԻԺՈՐ ԶԱՎԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ

ԿԳՄՍ նախարարությունը ցավով տեղեկացնում է, որ 2023 թ. մարտի 9-ին 78 տարեկան հասակում կյանքից հեռացել է Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ, դիրիժոր, «Մենակատարներ» անսամբլի հիմնադիր Զավեն Վարդանյանը: Զավեն Նազարեթի Վարդանյանը ծնվել է 1945 թ. հունվարի 15-ին Միրիայի Հալեղ քաղաքում: 1947թ. տեղափոխվել է Հայաստան: 1974 թ. ավարտել է Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դիրիժորական ֆակուլտետը: 1975թ. սկսել է դիրիժորի կարիերան, հիմնել եւ ղեկավարել է «Մենակատարներ» անսամբլը: 1979-90 թթ. եղել է Երեւանի պետական կամերային նվագախմբի գեղարվեստական ղեկավարն ու գլխավոր դիրիժորը:

Նրա գլխավորությամբ իրականացել են հայաստանյան բազմաթիվ փառատոններ ու մրցույթներ, եւ նրա մեկնաբանմամբ հայաստանցի ունկնդիրն առաջին անգամ ծանոթացել է Ստրավինսկու, Շնիտկեի, Վարեզի, Հենցի, Այվզի, Կոկկոնենի, Նորդգրենի եւ կոմպոզիտորական արվեստի համաշխարհային դասական այլ հեղինակների գործերին: 1992-2010 թթ. դասավանդել է Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում: 1994-2000 թթ. եղել է Երեւանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի դիրիժոր: Որպես հրավիրյալ դիրիժոր՝ հանդես է եկել Ռուսաստանում, Եվրոպական մի շարք երկրներում, ԱՄՆ-ում:

2003-2007 թթ., Էկվադորի կառավարության հրավերով, աշխատել է տեղի համալսարանում եւ ղեկավարել այդ երկրի բոլոր 4 սիմֆոնիկ նվագախմբերը: Պարգեւատրվել է մի շարք մեդալներով, պարգեւներով: 2009թ. արժանացել է Հայաստանի արվեստի վաստակավոր գործչի կոչման: ԿԳՄՍ նախարարությունն իր խորին ցավակցությունն է հայտնում վաստակաշատ դիրիժորի ընտանիքի անդամներին, հարազատներին եւ գործընկերներին, նրա արվեստը գնահատողներին: Հանդիսատեսի հիշողության մեջ նա կմնա իբրեւ բարձրաճաշակ երաժիշտ եւ իր գործի եզակի գիտակ:

Զավեն Վարդանյանի հոգեհանգստի արարողությունը տեղի կունենա Կոնդի Սբ Հովհաննես եկեղեցում մարտի 11-ին՝ ժամը 17:30-20:00-ին: Վերջին հրաժեշտը տեղի կունենա մարտի 12-ին՝ժամը 11:00-13:00-ին, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տնից:

ԼՈՒՐԵՐ

ՀՐԱՊԱՐԱԿԵԼ Է ԻՐ ԷՋՈՒՄ

Հոլիվուդյան դերասան Ուիլ Սմիթն իր սոցիալական ցանցում հրապարակել է Just a two of us թրեքը. բաս-թրեքը կատարում է հայ բաս կիթառահար Էլեն Ալավերդյանը: «Վաու, Էլենը ֆանտաստիկ է: Դու հրաշալի ես», - գրել է «Ես լեգենդ եմ» ֆիլմի աստղը:

«Լաս Վեգասից 11-ամյա Էլեն Ալավերդյանին ճանաչում են, սիրում են. այսքան երիտասարդ տարիքում նա յուրացրել է բաս-կիթառը՝ կատարելով հայտնի ստեղծագործությունների բարդ պարտիաներ: Նա աներեւակայելի տաղանդավոր է եւ ունի հիանալի երաժշտական ճաշակ. հիասքանչ համադրություն է, այնպես չէ՞»:

Աղջիկն ունի Instagram-ում հազարավոր բաժանորդներ. նրանց թվում են ոչ միայն լավ երաժշտության սիրահարներ, այլեւ իրական մասնագետներ, որոնք Էլենի հասցեին չեն խնայում արժանի գովասանքի խոսքեր:

ՀԻԱՍԹԱՓՎԱԾ ԵՆՔ ԱՐԴՅՈՒՆՔԻՑ

Սաուդյան Արաբիայի առաջնությունում «Ալ Իթիհադից» 0:1 հաշվով կրած պարտությունից հետո «Ալ Նասրի» 38-ամյա պորտուգալացի հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուն շնորհակալություն է հայտնել երկրպագուներին:

«Մենք հիասթափված ենք արդյունքից, բայց կենտրոնացած ենք մեր մրցաշրջանի եւ առաջիկա հանդիպումների վրա:

Շնորհակալություն «Ալ Նասրի» երկրպագուներին աջակցության համար: Մենք գիտենք, որ դուք միշտ զորավիգ կլինեք մեզ»,- գրել է Ռոնալդուն:

Երկրորդ խաղում անընդմեջ Ռոնալդուն չի կարողացել գոլ խփել կամ գոլային փոխանցում կատարել:

20 խաղից հետո «Ալ Նասրը» 46 միավորով նահանջել է երկրորդ տեղ, «Ալ Իթիհադը» գլխավորել է մրցաշարային աղյուսակը (47 միավոր):

ՊԱՅՔԱՐ՝ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայաստանի հրաձգության հավաքականը մարտի 12-ին կսկսի պայքարը Եվրոպայի առաջնությունում:

Հայաստանի հավաքականի կազմում մեծահասակների Եվրոպայի առաջնությանը կմասնակցեն Էլմիրա Կարապետյանը (ատրճանակ), Բենիկ Խլղաթյանը (ատրճանակ), Զավեն Իգիթյանը (ատրճանակ), իսկ երիտասարդների պայքարում մեդալների համար կմրցեն Գագիկ Նիկողոսյանը, Վրեժ Թորոսյանը (հրացան), Գոռ Մանուչարյանը, Արմեն Գեւորգյանը, Գրիգոր Պողոսյանը (ատրճանակ): Մարզիչները կլինեն Սեյրան Նիկողոսյանը եւ Անդրանիկ Այվազյանը:

Եվրոպայի առաջնությունն անցկացվում է Էստոնիայի մայրաքաղաք Տալինում: Այն կմեկնարկի մարտի 12-ին:

● *Մարտի 12-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Մանչուկն ու Կարլսոնը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 14:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Մինչեւ երկու տարեկան երեխայի խնամքի համար տրվող վճարովի արձակուրդի ժամանակահատվածը հաշվառվո՞ւմ է արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժում:

Մարիաննա Մայրապետյան (55 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ եթե կինը հղիության կապակցությամբ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող ցուցակներով նախատեսված աշխատանքից ժամանակավորապես այլ աշխատանքի է տեղափոխվել նույն գործատուի մոտ կամ մինչեւ հարմար աշխատանքով ապահովվելը գտնվել է հարկադիր պարապուրդում, ապա այդ աշխատանքը կատարելու կամ չաշխատելու ժամանակահատվածները՝ մինչեւ երեխայի երկու տարեկան դառնալը, հաշվառվում է արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժում:

Արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող ցուցակներով կամ մասնակի կենսաթոշակի իրավունք տվող ցանկերով նախատեսված աշխատանքներով զբաղված անձանց՝ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված երեխայի խնամքի համար տրվող արձակուրդի ժամանակահատվածը մինչեւ երեխայի երկու տարեկան դառնալը հաշվառվում է արտոնյալ պայմաններով կամ մասնակի կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժում առանց այդ ժամանակահատվածի համար սոցիալական վճար կատարած լինելու մասին տեղեկանքի:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Աշխատանքային ստաժը հաշվարկվում է 16 տարեկանից: Եթե աշխատանքային գրքույկում կամ աշխատանքային գործունեությանը վերաբերող արխիվային փաստաթղթում առկա են ՀՀ օրենսդրությամբ սահմանված, աշխատանքի ընդունվելու եւ աշխատանքից ազատվելու մասին պատշաճ գրառումներ ավելի վաղ տարիքից աշխատելու մասին, ապա այս դեպքում աշխատանքային գործունեության ժամանակահատվածն աշխատանքային ստաժում հաշվառվում է ոչ վաղ, քան սկսած 14 տարեկանից:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Եթե կազմակերպությունը գործունեություն չի իրականացնելու, ապա արդյոք կա՞ շահութահարկի կանխավճարներ կատարելու անհրաժեշտություն:

Նելլի Խաչատրյան (48 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի՝ 13 հունիսի 2011թ. պարզաբանման համաձայն՝ գործունեություն ժամանակավոր (առնվազն մինչեւ ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ը) կամ անորոշ ժամկետով չիրականացնելու մասին հայտարարությունը (կամայական ձեւով կազմված) հարկային մարմին գրավոր ներկայացրած եւ այդ ժամանակահատվածում գործունեություն չիրականացրած ռեզիդենտ կազմակերպությունները հայտարարությունը հարկային մարմին ներկայացնելու եռամսյակից հետո՝ մինչեւ գործունեությունը վերսկսելու եռամսյակը ընկած ժամանակահատվածի համար շահութահարկի կանխավճարների եւ նվազագույն շահութահարկի եռամսյակային գումարների վճարումներ չեն կատարում:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Սահմանված ժամկետներում ռեզիդենտի կողմից շահութահարկի եռամսյակային վճարման գումարների մուծումներ չկատարելու դեպքում հարկային մարմիններն այդ գումարների եւ դրանց գծով հաշվարկված տույժերի վերաբերյալ պահանջներ են ներկայացնում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Եգիպտոսում



Եգիպտոսում Հայաստանի դեսպանությունը մասնակցում է ս.թ. մարտի 9-18-ն անցկացվող Կահիրեի միջազգային տոնավաճառին:

Տոնավաճառը համարվում է Եգիպտոսի ամենամեծ առեւտրային միջոցառումներից մեկը: Տոնավաճառի եգիպտացի եւ օտարերկրացի մասնակիցները ցուցաբերել են հետաքրքրվածություն հայկական արտադրանքների նկատմամբ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **10.03.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: